ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 16 հունվարի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Վ. Պողոսյանի

Ուսումնասիրելով «ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործը քննության
ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ.

1. «ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ն 27.12.2012թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան: Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է. «...ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածի դրույթում բացակայում է ինչպես լիազորության կամայական իրականացումը կանխելու երաշխիքները, այդպես էլ այդ լիազորության ոչ իրավաչափ իրականացումը հաղթահարելու միջոցը եւ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, որը տարբերվում է սահմանադրաիրավական բովանդակությունից եւ չի բացառում ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտը օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1, 3, 6, 18, 19, 92, 93 եւ 94-րդ հոդվածների պահանջներին հակասող»:

2. Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթները սահմանափակում են «ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ի՝ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման հնարավորությունը:

3. Դիմումի, ինչպես նաեւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվում է, որ՝

ա/ դիմողը, վիճարկելով նշյալ դրույթի սահմանադրականությունը, չի ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ դրա հակասահմանադրականության վերաբերյալ: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը, որպես անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով:

Դիմողը նաեւ չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաեւ չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է.

բ/ ըստ դիմումի ընդհանուր տրամաբանության՝ կոնկրետ տվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա

դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ: Փաստորեն, դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց:

ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴՈ-21 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ.

գ/ նշյալ դրույթի վերաբերյալ առկա է ՍԴՈ-984 որոշումը, հետևաբար՝ այս առումով առկա է անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

16 հունվարի 2013 թվականի
ՍԴԴԿՈ/2-3